

Փոխառութեան չափն իսկ լրացաւ»:

29 Հոկտեմբեր

Օսմանեան կառավարութիւնն ազգային հիւանդանոցին բազում տարիներէ հետէ յատկացուցած միսն ալ դադրեցուց այս օրերս:

Հիւանդանոցին պատուարժան հոգաբարձութիւնը ժողովրդեան դիմելով՝ հացին եւ մսին դադարումէն պատճառած կորուստը դարմանել կաշխատի:

30 Հոկտեմբեր

Սովելոց Յանձնաժողովն այսօր ալ հետեւեալը կհրատարակէ.

«Ինչպէս կնախագուշակէինք՝ ահա արմտեաց գինն օր ըստ օրէ կբարձրանայ. սովեալ գիւղօրէից բնակիչք ի քաղաք կխոնին. նօթելոց տխուր թափօրք ընթանալ կսկսին. հին նօթութեան աղաղակն, զոր գարուն պահ մի դադարեցոյց՝ վերստին կը վերադառնայ:

Յարդ աղերս, պաղատանք առաջի ողորմածաց արկինք: Այսօր մեռելոց դիակներ սոցա գթութեանց կներկայացնենք»:

Եւ գաւառներէն ընդունած տխուր լուրերը կշարէ ժողովրդեան առջեւ:

Մայրաքաղաքիս ամեն թաղերու մէջ ի նպաստ սովեալներու վերստին դրամ կհաւաքուի....:

31 Հոկտեմբեր

Անգղիա կխրատէ Յունաստանն, որ համբերէ, ապագային մէջ օգնութիւն խոստանալով անոր:

Արդէն Յունաստանն համբերելու համար խրատի պէտք չունի, եթէ Եւրոպայէն օգնութիւն չլինի՝ համբերելու ստիպուած է:

Աղօթենք, որ թագուհւոյն կառավարութիւնը մեր խնդրոյն համար ալ համբերելու քաղաքականութեան չհետեւի, վասն զի հայերը չափէն աւելի համբերած են եւ ա՛լ համբերելու կարողութիւն չունին:

**

Թէպէտեւ աչքերը տեսնելու համար տրուած են մարդուս, բայց շատ մը երիկներ զանոնք կգործածեն՝ չտեսնելու համար իրենց կիներուն յանցանքները: